

բազմա քահանայ, այն պաղարիւն ոգւով սրով սո-  
վոր են միսինարք Տէրօջը գործը յառաջ տանիլը,  
սակայն Հայոց մէջ միայն՝ կենդրէ հայ քահանայէն  
տղօթեկ իրան յանձնուած գործն ի գլուխ հանե-  
լու համարն:

— Ասանէն եկած լուրերը դառն են, թէ ժո-  
ղովրդեան կարօտութեան և թէ Դոմինիկեաններու  
շահատակութեանց վրայ, Բէք տը Քրանս, ասոնց  
գլխաւորը, կրօնական հրապարակ մը բացած է, և  
դաւանափոխութեան պայմանին ներքեւ հայ կարօ-  
տեկոց նպաստ կրաշխէ այն դրամներէ զորս կտա-  
նայ Եւրոպայէն: Բայց Բէք տը Քրանս որքան որ  
կրօնական, աշխարհական պաշտօն մ' ալ կկարէ և  
այն է Քրանսական հիւպատոսի տեղակալութիւնը:  
Խնդիր է թէ Քրանսայի ժողովուրդը կենրէ՞ որ կա-  
րօտեկոց համար իր տուած դրամն այնպէս գործա-  
ծուի, և Քրանսայի կառավարութիւնն իրօք կհան-  
դուրժէ՞ որ իր դրօշին ներքեւ Բէք տը Քրանս կրօ-  
նական հրապարակ մը հաստատէ:

— Երուսաղէմի մէջ 44 մզկիթ կայ և 70 եկե-  
ղեցի, այս եկեղեցիներուն 26-ը կպատկանին Օր-  
թոգոքսներուն [Ռուսաց և Յունաց], 13-ը Լատինաց,  
2-ը Յոյն կաթողիկոց, 1-ը Մարոնիներու և  
1-ը Ասորի կաթողիկոցներու, ընդամենը 17 կաթողիկ  
եկեղեցիներ՝ Քրանսայի պաշտպանութեան տակ  
գտնուող հասարակութեանց համար, մինչդեռ օր-  
թոգոքս եկեղեցիներու թիւը գրեթէ ասոր կրկնա-  
պատկին է: Հոն ունին նաև Հայեր 6 եկեղեցի (Ս.  
Յակոբ, ս. Յարութիւն, ս. Աստուածածին, ս.  
Փրկիչ, ս. Հրեշտակապետ և ս. Թորոս), Բողոքա-  
կաններ՝ 14, Ղ. պօթիք՝ 2, Հապէշք՝ 1 եկեղեցի,  
իսկ Հրեաներն ունին 3 մեծ և 100-ի չափ պզտիկ  
սինակոկաներ: — Երուսաղէմի բոլոր եկեղեցեաց  
զանգակներուն թիւն է 195, որոց 95-ը Օրթոգոքս-  
ներուն կպատկանին, 35-ը Բողոքականներուն, 22 ը  
Լատինաց, 11-ը Հայոց, 3-ը Յոյն կաթողիկոցներուն,  
3-ը Մարոնիներուն, 2-ը Ղ. պօթիկներուն, 2-ը Ասորի-  
ներուն և 2-ը Հապէշներուն: — Անն նաև 27 պարօց-  
ներ տղայոց և աղջկանց համար և 5 հիւանդանոց,  
— Ս. քաղաքին մէջ քաղաքական ներկայացուցիչներ  
(հիւպատոս) ունին Անգլիայ, Քրանս, Ռուսիա,  
Իտալիա, Գերմանիա, Աւստրիա, Միացեալ—Նա-  
հանգր, Սպանիա, Յունաստան և Պարսկաստան:

չէնքի՝ և շրջապատի հետ թիւնները այդ եկե-  
ղեցւոյ շինութիւնը շատ աւելի հին ցոյց կու-  
տան քան տեղին աւանդութիւնը: Այդ եկե-  
ղեցին ևս շինած է Ակօրչայ անուանով մի անձ,  
որի գերեզմանաքարը կը գտնուի տաճարի  
մէջտեղը և որ մեռած է Ռմիլէ ին (այսինքն  
1612 ին): Այս եկեղեցւոյն բակին մէջ կայ մի  
զանդակատուն, որ երեք յարկերի է և որի  
երկրորդ յարկին մէջ ևս կայ ս. Լուսաւորի  
նուիրած մի խորան. նաև այս եկեղեցւոյ բա-  
կի արեւմտեան շրջապարսպին վրայ վանքի  
ձև ունեցող մի ուրիշ շինութիւն ևս կայ,  
որի երկրորդ յարկին մէջն ալ կաթօղիկեկ  
ձևով մի հին խորան կայ, որ ս. Յակոբ  
կանուանուի տեղացւոց կողմանէ: Այս եկե-  
ղեցւոյն մէջ ևս տարին երկու անգամ պար-  
տաւորեալ ս. պատարագ կը մատուցուի՝ մին  
հոգեղարուստէն յետոյ Ա. Յարութեան կիւ-  
րակէին, երբ ամբողջ ժողովուրդը թափօրով  
կերթայ և ս. պատարագէն յետոյ ևս մատաղ  
կը լինի և մի անգամ ալ զարնան սկզբնաւոր-  
ութեան Յունաց ս. Գէորգին, այսինքն  
Խարէլիզդին օրը: Այս եկեղեցին քաղաքէն  
1/4 ժամ հեռու կը գտնուի: Թէ ս. Օգսէնտ  
և թէ Հաճ-Պատար վանքերն հողային ահալին  
կալուածներ ունին, ս. Օգսէնտի կալուած-  
ները տարեկան 3950 Ֆլորին եկամուտ կը բե-  
րեն, իսկ ս. Հաճ-Պատարինը 2600 Ֆլորին:

Սուչաւացւոց հինգերորդ եկեղեցին կը  
գտնուի Կուրահօմօր անուանուած զիւղա-  
քաղաքին մէջ, որ Սուչաւայէ 3 ժամ հե-  
ռուէ: Այդ եկեղեցւոյն հիմը դրուած է 1861  
թուականին, նախաձեռնութեամբ պ. Գէորդ  
Թապաքարի, որ եկեղեցւոյ շինութիւնը շա-  
ւարտած ի Տէր հանգած է և ժողովուրդը ընդ-  
հանուր հանդանակութեամբ շինութիւնը ա-  
ւարտելով 1868 ին օծել տուած է: Այս եկե-  
ղեցւոյ մէջ, որ ս. Գէորդ կանուանուի տարին  
հինգ անգամ պարտաւորեալ ս. պատարագ  
կը մատուցուի. Ա. ս. Աստուածածնոյ զինացի  
կիւրակէին ի յիշատակ եկեղեցւոյ օծման տա-  
րեղարձի երբ մատաղ ևս կը կարուի. Բ. ս.  
Ժննդեան, Գ. Չապի, Գ. Համբարձման և Ս.  
Աւետան տօներէն անմիջապէս յետոյ: Թէ և  
այս եկեղեցին շինուած ժամանակ այդ զիւ-  
ղաքաղաքին մէջ 25-30 տունի չափ հարուստ

ԱՒՍՏՐՈՅ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.

(Շարունակութիւն) \*

Սուչաւայի Հայոց չորրորդ եկեղեցին է  
ս. Օգսէնտ վանքը, սորա մասին ևս կաւան-  
դուի թէ 1606 թուականին շինած է, բայց

\* Տես, «Արարտ» 1899 թ. համար Ա. հր. 12.

Հայեր կը գտնուին եղեր, այժմ հայիւ թէ, 6-7 տղբաւ ընտանիքներ կը գտնուին:

Այս ամեն եկեղեցիներու մէջ որ և իցէ եկեղեցական պաշտօնակատարութիւն տեղի ունեցած ժամանակ Սուչաւայի կեդրոն. ս. Թաչ եկեղեցւոյն մէջ ժամասացութիւն չլինէր, որովհետեւ Սուչաւայի միակ քահանան կը կատարէ այդ ամեն եկեղեցիներու ժամասացութիւնը: Քանի տարիներ առաջ Սուչաւայիք մշտական 2 քահանայ ունին եղեր. այժմ պակասը լրացնելու նպատակաւ իրենց միջէն տիրացու Կարապետ Կընայեանին ս. Ըջմիածին զրկած են հարկ եղածները սովորով քահանայ դասնալու համար:

Մի միայն Սուչաւայի մէջ կայ 72 տուն հայ որոց ընդհանուր թիւն է երկու սեռէ մեծ և փոքր 206 հոգի. իսկ մնացեալ Պուքովինայի և Կալիցիոյ մասին մէջ 78 տուն, որոց ընդհանուր թիւն է երկու սեռէ մեծ և փոքր 224 հոգի. ուրեմն Սուչաւայի և Պուքովինայի հին գաղթականութիւնը կը բաղկանայ 180 ընտանիքէ, որոց ընդհանուր թիւն է 430 հոգի, այսինքն միջին հաշուով մէն մի ընտանիք նոյն իսկ 3 հոգիէն պակաս:

Յաւալի է ասել թէ գեղ ի Աւստրիոյ սահմանը գաղթող 40000 ընտանիքների այդ շնչին մնացորդն ալ կարծես նախախնամութենէն դատապարտուած է մի քանի տարիներ յետոյ բոլորովին ոչնչանալու. որովհետեւ ինչքան ալ որ հին սերունդը մինչև ցարդ մայրենի լեզուն զէթ աղաւաղեալ վիճակի մէջ պահպանած է, բայց նոր սերունդը մեծաւ մասամբ մայրենի լեզուն անձանթով է. մի քանի ընտանիքներէ զատ հայ գերդաստանների առանին լեզուն կամ գերմաներէն և կամ ռումաներէն է: Աակից զատ 150 տունէն 70—ը կամ օտարների հետ ամուսնացած են և կամ անգլաակի սյնակէս որ այդ տունների ներկայացուցիչների մահուամբ այդ տուններն ալ կը փակուին: Ուրեմն մօտաւորապէս 80 ընտանիք կը մնան, որոնք յոյս կուտան զեռ և ս մի առժամանակ հայութիւնը պահպանել: Դժբախտաբար այդ ընտանիքների մեծագոյն մասն ալ միմիայն աղջիկ զաւակներ ունին. և որովհետեւ իրենք Եւրոպական Հայ գաղթականութիւն պարունակող ուրիշ երկիր-

ներէն մեծաւ մասամբ հեռու կը գտնուին, հետեւաբար ստիպուած են իրենց աղջիկները օտարների հետ ամուսնացնել: Ահա այդ պատճառներով Պուքովինայի Հայոց ներկայն աննախանձելի և ապագայն բոլորովին մթին է:

Պուքովինայի Հայոց աղգային կրօնական գործերը կը հոգացուին երկու Աղգային մարմիններէ, որոց մին կը կոչուի Հոգաբարձութիւն և 7 հոգիէ կը բաղկանայ և որը կը վարեն ամբողջ Պուքովինայի և Կալիցիոյ Հայոց աղգային—կրօնական ընթացիկ գործերը և կալուածներու մատակարարութիւնը: իսկ երկրորդ ժողովը կը կոչուի «Մեծածողով», որին բացի Հոգաբարձութեան 7 անդամներէ ուրիշ հինգ հոգի և ս կը մասնակցեն: Հոգաբարձութեան նախագահը կը նախագահէ նաև Մեծածողովին: Հոգաբարձութիւնը կարևոր խընդրոց լուծման համար ի նիստ կը հրաւիրէ զՄեծածողովը, որ տարեկան մի անգամ պարտաւորեալ նիստ ունի Հոգաբարձութեան հաշիւները քննելով նոր պիւստի վաւերացնելու համար: Ունին մի կանոնադրութիւն, որ պետութեան կողմանէ վաւերացած է և որով Հայաստանեայց եկեղեցւոյ հարազատը իրաւունք ունին իրենց աղգային կրօնական գործերը ըստ կամս վարելու և կառավարութիւնը ոչ մի իրաւունք չունի իրենց գործերուն միջամտելու: Այդ պատճառով կը վախնան կանոնադրութիւնը փոփոխութեան ենթարկելը որպէսզի կառավարութենէն դժուարութեան չհանդիպեն:

Արդ՝ վերոգրեալ հաշուով կը տեսնուի թէ Աւստրիոյ մէջ գտնուող Հայաստ. Աւաքել. եկեղեցւոյ հարազատների ընդհանուր թիւը հայիւ 525—530 կը լինի: Արդնցմէ զատ Կալիցիայի և Պուքովինայի մէջ կան 4000 ի չափ հայ հոսովմէագաւաններ, նաև Թրանսիլվանիոյ և Հունգարիոյ մէջ ալ մօտաւորապէս 10000 հայ հոսովմէագաւաններ, և եթէ 500 ի չափ ալ Աւստրիոյ այլ և ոյլ կողմերը ջրուած հայ

\* Սուչաւայի Հայոց աղգային եւ կրօնական առեկական սովորադրիներէ իրենց վիճակագրութեան եկն յիշատակարանների, իրենց բարբառի յատակ մի բանի հարիւր բաների հաստատոյցն առած են, զորս մտադիր եմ մաս առ մաս հրատարակութեան տալ:

Տնովմէագաւառները դանուին՝ Աւստրիոյ Հայոց ընդհանուր թիւը կը լինի 15000, որոնցմէ մի միայն մօտաւորապէս 500-ը Հայաստ. Առաքել. եկեղեցւոյ հօտին կը պատկանին:



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԸԺԻՆ

Չ Ա Ն Չ Ր Ո Ւ Թ Ի Ն

(Wilhelm Münch)

Ես երբէք չեմ ձանձրանում: շատ անգամ լսում ենք մեր ծանօթներից, Այս խօսքը անշուշտ գեղեցիկ ապացոյց է, թէ նոցա ներքին կեանքը հարուստ և բեղմնաւոր է: նոցա հոգեկան աշխուժութիւնը անսպառ է, թէ նոքա ստանում են և իրանց վերայ ազդում է ապաւորութիւնների առատութիւն: թէ ընդունակ են նոյն իսկ ամենաչնչին և նուազագոյն զրդիչներից անգամ սնանուիլ և զգաստանալ, և թէ առհասարակ օժտուած են ուրիշ շատ այսպիսի լաւ յատկութիւններով: Բայց այդ կարող է լինել նաև մի բողբոջանային ինքնամոլորութիւն՝ փոքր ինչ սնափառութեամբ համեմուած: Վասն զի, եթէ և մարդ կարողանայ այնքան փարձուիլ, որ ինքն իրանից ամենևին չձանձրանայ, հասկա ո՛րքան դժուար բան է, որ օտար մարդկանց կամ զբոսի իրերի պատճառով ծագած ձանձրութիւններից՝ զերծ և ապահով մնայ: Թող այդպիսիներից մէկը անձրեային օրը երկու բողբոջ ուշ հաննի երկաթուղու մի յետ ընկած կայարանը, և ապա մինչև հետեւեալ գնացքը՝ չորս ամբողջ ժամ այդպիսի անսպառ, ամայի նեղ սրահի մէջ բանտարկուած մնալու դատապարտուի: անշուք դատարկ պատերին նայելով, առանց ընթերցանութեան, առանց խօսակցի, առանց ճաշարանի, ուր գէթ ծնօտները շարժեցնելով կարողանար ժամանակը յաղթել, թող որ փոքր ինչ քաղաքակիրթ մարդը մի այսպիսի վիճակի մէջ ընկնի, և թէպէտ անարգել միշտ ազատութիւն կունենայ աշխարհքի մեծամեծ իմաստութիւններ հնարելու իւր մտքի մէջ կամ մի երկար ոտանաւոր շարադրելու գլխի մէջ կամ դէթ կենաց բոլոր յիշատակները իւր առաջ կենդանացնելու կամ ապագայի ամենաընդարձակ ծրարագիրներ թխելու:— սակայն նա չի կարողանայ ուրանալ, որ բազմիցս անտանելի նեղութիւն, թոյն

և յուսահատութիւն թափելով հանդերձ՝ այնուամենայնիւ ձանձրութիւն կրեց, որքան էլ ձանձրանալուցի բնէ ապահոված էր և այդ հրէշին տապալելու հնարներ ունէր: Մի խօսքով, եթէ ոչ մենք ինքներս և ոչ ուրիշները նեղը ընեն մեզ, շատ անգամ հանգամանքների որոգայթները այդչափ ծանր իշխանութիւն են ստանում մեր կեանքում: Եթէ անաշուտութեամբ չորս բողբոջ շրջահայեր և տեսներ, թէ ձանձրութիւնը քանի դոնորից աներևոյթ կերպով ներս է սողոսկում մեր կենաց մէջ և շիտթութիւններ է ձգում, թէ քանի անգամ մենք ինքներս կամ ուրիշները և կամ ինքը կեանքը մեզ ձանձրութիւն են պատճառում, հասկա կհոստովանենք, որ մենք ստեղծուել ենք, առես թէ հէնց միայն բաւական չափով ձանձրանալու համար:

Ձանձրութիւնը արդէն մանկութիւնից արմատ է ձգում: Ծիծ ուսող երեխան իւր լացով յայտնում է ոչ միայն մարմնական ցաւ կամ քաղցածութիւն կամ ուրիշ տհաճութիւն, այլ շատ վաղ հասկացնում է, թէ իւր զիրքի ու կեցուածքի առժամանակեայ փոփոխութեան է կարօտում: Թէպէտ «օրօրոցը իւր անհուն անսահման տիեզերքն է, բայց և այնպէս արդէն նա էլ սկսում է պահանջել, որ օրը փոփոխի նոր հանգամանքների մէջ դրուի, զոր օր, մօր կամ դայիկի ձեռքով խտտուի: Մենք շատ անգամ զուրիսներս կտարում ենք, թէ արդեօք ինչով դադարեցնենք երկու տարեկանի ճիւղը, բայց կասկած չկայ, որ շատ անգամ խեղճը ձանձրանում է: Նոյն իսկ աւելի հասակաւոր մանուկների ուրախ խաղերի մէջ՝ յանկարծ մտնում է շար դեւը, և խաղի համը կորչում է, որ մի նուագ առաջ այնպէս զուարթացնում էր ամէնին: Ապա քանի անգամ տարակուսուած է մնում նոյն իսկ խելացի մայրը, երբ որ կշտի սենեակից անօղնակարծ ձայն է լսում: «Մայրիկ, հիմա ի՛նչ անեմ»:

Այնուհետև գալիս է դպրոցը, որ առժամանակ աշակերտի աշխոյժը պահում է նոր նոր ապաւորութիւններով: Բայց յետոյ, երբ որ ուսուցիչը կարծում է, որ իւր մատուցածը կենդանի հաց է և ոչ թէ քար, որ իւր ճաշակին և զգացման նոյնը լով աւանդած ուսումը միշտ հաճելի և ցանկալի կերպով փոփոխական է, և ուրեմն անշուշտ հետաքրքրական, հասկանալի արժանաւոր պիտի լինի, — ահա այդ ուսումն իսկ աշակերտի քիմրին չի յարմարում: աշակերտը միայն բացառական դէպքերում և կողմնակի կերպով այդ բանը զրօսալի է գտնում, ոյն ևս տառաւելապէս այն պարագայում, որով ուսումնաբանը չի կամենայ պարծենալ, այսինքն երբ որ առիթ է ծագում ամէն կարգի տղայական շարութիւններ անելու և ընկերական քաջագործութիւններով սիրանալու, իսկ մնացած դէպքերում նա աւելի հառաչում է, որ ծանրութիւններից ճընշուած՝ քաղցր օր չի տեսնում: Այսպիսի կեանք